




### ԴԱՏ 1.9. Քարտեզագրական պատկերման եղանակները

#### 1.



### Արեալներ

2. Քարտեզագրամի որակը բարձրանում է այն դեպքում, երբ քարտեզը բովանդակող երևույթը դիտարկվում է առավել փոքր տարածքային միավորների սահմաններում:

Քարտեզագրամն այն քարտեզն է, որը բնութագրում է որևէ տարածքային (վարչատարածքային) միավորի գումարային և միջինացված, վիճակագրական ցուցանիշների պատկերը մեկ այլ միավորի նկատմամբ՝ մեկ շնչին բաժին ընկնող արտադրանքի ծավալ, վարելահողերի զբաղեցրած մակերեսը շրջանի

գյուղատնտեսական հանդակների բաժնում (%):

Քարտեզագրամի համար պարտադիր է սանդղակի առկայությունը (ստվերագծումով, միագույն կամ բազմագույն) և հագեցվածությունը: Գույնի կամ ստվերագծման խտությունը ցույց է տալիս տվյալ տարածքային միավորում որևէ երևույթի արտահայտվածության աստիճանը և դիտողականություն հաղորդում պատկերվող երևույթի ուժգնությանը:

Քարտեզագրամները և քարտեզադիագրամները մեկ քարտեզում հաճախակի են համակցում:

Քարտեզադիագրամն այն քարտեզն է, որի վրա պատկերված են բացարձակ ցուցանիշներ, տարածքի որոշակի մասերում, տարածքային միավորի ներսում կան դիագրամներ (ուղղանկյունանիստ, խորանարդ, շրջան), որոնք ցույց են տալիս վիճակագրական տվյալներ՝ որևէ շրջանի հողային ֆունդի կառուցվածքը, բնակչության թվաքանակը, համախառն արդյունաբերական արտադրանքի ծավալը՝ ըստ շրջանների և այլն: Սրանք քարտեզների վրա լինում են կետային, գծային (սյունիկներ, գոտիներ), մակերեսային (քառակուսիներ, շրջան և այլ երկրաչափական ձևեր), ծավալային (խորանարդ, գունդ):

**Քարտեզ-սխեմա (գծապատկեր):** Սրանք չունեն քարտեզագրական ցանց՝ եղանակի, երկրի առևտրային կապերի, տարբեր երթուղիների ու ճանապարհորդությունների և այլն:

Քարտեզագրական պատկերման շատ եղանակներ միմյանց շատ նման են: Գունային ֆոնը և ստվերգծումը կիրառվում են նաև որակական ֆոնի, իզոգծերի, արեալների եղանակում, քարտեզագրամներում, թեմատիկ քարտեզներում, քարտեզագրման մի շարք եղանակներ հաճախ համադրվում են: Քարտեզագրման եղանակը որոշելու բանալին կարելի է գտնել քարտեզագրված երևույթների տարածման բնույթի և քարտեզի լեգենդային՝ լուսանցագրի ընթերցման միջոցով: